Դանիէլն՝ «Ցամին ութեւտաններորդի», և ծաղկեց զամենայնն և զարդարեց. և որ զմեզ յիշէ՝ ինքն յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն։

Կատարեցաւ սա որ կոչի Տարէգիրք, ձեռամբ յոգնամեղ եպիսկոպոսի Սիմէոնի և Յովհաննէս երիցի, ի քաղաքս որ կոչի Սեչով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, առ ոտն կենսաբեր Ս. Խաչին, ի հայրապետութեան Տեառն կաթողիկոսի Տէր Սարգսի, և եպիսկոպոսութեան այսմ նահանգի փցուն գըրչիս, և պարոնութեան Պոհտան պարոնին, տարի ու. կէս թագաւորութեան նորա. ի թվականութեան Հայոց ՉԾԵ, ի մարտ ամսոյ ԺԲ օրն։ — Ցայսմ ամի Տէր Յովհաննէս արքեպիսկոպոս Աղանպէկէն, և Սարգիս եպիսկոպոսն և Դաւիթ աբեղան, նվիրակ էին եկեալ ի Ս. Էջմիածնէն. յիշեցէք և ըզնոքա ի բարին. և ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս ողորմեսցի Քրիստոս Աստուած։.. [Առ Մխիթարեանս Վիենայ]։

1518·

Ես Յոհաննէս աբեղաս գրեցի զսայ. և ես Ավետիք երեց օրընկեցի և գրեցի զսա ի Կամենից քաղաքս, Թվին ՉԿԷ։ [Ցայսմաւուրք, ի Բարիզեան գրատան]։

1544·

Կրկին նորոգեցաւ Սաղմոսարանս և կազմեցաւ ձեռամբ յոգնամեղ գրչի ՃՃ ԺԺ ՄՄ 00 ՌՌ ԺԺ. (Մինասի) դպրի, ի քաղաքիս Կամենից. Թվին ՉՂԳ, մարտի Ի աւարտեցաւ։ Եւ Քրիստոսի փառք։ [Սաղմոս ի Ս. Ղազար]։

1550·

Գրեցաւ գիրս ի կայսերանիստ և ի մայրաքաղաքն մեծն Հռոմ ի Թվ. Հայոց Մեծաց ՉՂԸ, սեպտեմբերի Զ. ձեռամբն տառապեալ հողոյս Սիմէոն սարկաւագի Իլովցոյ. Եւ Քրիստոսի փառք։ [Կոնդակ մի Ստեփանոսի կաթողիկոսի]։

1556·

Գրեցաւ աստուածաշունչ գիրս սուրբ հին Կտակարանաց ի Թվ. Հայոց Մեծաց ՌԵ, սեպտ. Դ, ի մայրաքաղաքն ի Լով, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին Ննջման. ի թագաւորութեան Զիկմունտ Ակոստոսին Իլախաց և Ըռուզաց և այլ խառնիճաղանճ ազգաց։ Ի ժամանակս այս էր քոյր թագաւորին Մահրաց թագուհին Զապէլլա և իւր նորաբողբոջ որդին Եանուշ թագաւորն Մահրաց, և բազում իշխանք և հեծելազօրք ի քաղաքս ի Լով։ Եւ գրեցի զսա ի խնդիր երջանիկ և աստուածաբան վարդապետին և արքեպիսկոպոսին Տէր Գրիգորին Վարաքեցոյ, որ մականուն Անանիենց կոչի, և իմոյ անարժանութեանս օրհնողին Սիմէոնիս։.. Զնորափոխ գրոցս փոխարկուս զանպիտան ոգիս զԱւետ՝ յիշեա վերահասուտ. ընդ նմին և զտառապեալ հողս զգծողս